

20849

ԵՐԵԱՆ ԿԱՐԺԱՐԱՆ

1876

ՏՆՕՐԷՆԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1909 — 1910

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ

Կ. ՊՈԼԻՍ

Ցգագրութիւն Ե. Մանուկեան

1910

323

7-53

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

373

Պ-53

1876

ՏՆՕՐԷՆԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1909—1910

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ


2 010

20002


Կ. ՊՈԼԻՍ

Տպագրութիւն Ե. Մատթէոսեան


1910



8343



522
39





Վարժարանից հիմնադիրը
Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
(1852—1907)

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պերպերեան վարժարանի հիմնադիրը ծնած է Խասգիւղ արուարձանին մէջ ի Կ. Պոլիս, Տեղւոյն ներսեսեան վարժարանը յաճախելէ յետոյ, 16 տարեկան հասակին Անդրիանուպոլիս ուսուցչութեան կը կոչուի, ուրկէ վերադարձին կ'ըստանձնէ կայսերական լիսէի մէջ դասախօսութիւններ, Յաջորդաբար զանազան ուսուցչական պաշտօններու ծեռնարկելէ վերջ եւ գրական ու հրապարագրական բոլիս գործունէութեան մը մէջ 1876ին, Հոկտեմբեր ամսոյ 1ին կը հիմնէ վարժարանը, ազգին «Լուսամիտ եւ ազնուասիրտ անդամներ» պատրաստելու համար, Բարոյական եւ իմաստասիրական խնդիրներու կանուխէն տեղեակ եւ անոնց լուծումներուն հիմնապէս տիրացած, իւր պերճախօս ու խանդոտ հոգիով՝ սկիզբէն դպրոցը կ'առնէ բարոյական բարձր ուղղութիւն մը, Վարժարանը Ազգին տուած է անհատներ, որոնք Հիմնադիրին գերազանց անհատականութենէն եւ սկզբունքներէն ներշնչուած են, Զի հիմնադիրը զիտէր կրթել, Իւր հաւատքը զէպ ի լաւը, իւր սէրը հանդէպ աշակերտներուն, զինքը կ'ընեն պերճախօս դաստիարակը. ան առաքեալ մըն է որ պաշտօն ունի քարոզելու երջանկութեան տանող բաները, որ զիտէ ցոյց տալ իւր աշակերտներուն իրենց լաւ հակումները եւ խրախուսել զիրենք անոնց մշակմանը մինչ յոռի միտումներու ոջնջացումը կը պահանջէ ան անողոր:

Իւր գրական գործունէութիւնը կը ներկայանայ զանազան հրատարակութիւններով (*) ուր հեղինակը է յաջորդաբար քեմբասաց, բանաստեղծ, բանասէր, թարգմանիչ, վեպ, յտակ, ճոխ, լի ոճի վարպետ մը մնալով, Իւր Գերման բանաստեղծութեանց թարգմանութիւնները պիտի մնան իրենց սեւին մեջ օրինակներ:

Ազգային շրջանակի մէջ իւր գործունէութիւնը կ'արտայայտուի ազգային դաստիարակութեան բարեկարգումով, Ուսումնական Խորհրդոյ Ատենապետութեան միջոցին բոլոր նախակրթարաններուն միօրինակ ծրագիր մը կը պատրաստէ

(*) Ռ. Յ. Պերպերեանի գործերը. Լամբէի Բանք Հաւատացելոյ ուրուք — Առաջին Տերեւք — Երկու Բանախօսութիւնք — Ժողովրդեան Զբօսանքները — Դրամ — Հերման եւ Դորոթէա — Համառօտ Բաղարական Տնտեսութիւն — Մարդիկ եւ Իրք — Դաստիարակի մը Խօսքերը — Խոհք եւ Յուշք — Դպրոց եւ Դպրութիւն — Յրանսեւրէն դասագիրք մը, Բազում յօդուածներ եւ անտիպ Գործեր:

եւ իրագործման կ'ենթարկէ. Հայ ուսուցչին դիրքը կը բարձրացնէ կազմական կանոնադիրով. իւր կեանքին վերջերը նախածնունարկ կ'ըլլայ հաստատելու ուսուցիչներու հանգստեան թոշակի սնտուկը:

Իւր կորովը, իւր անհատականութեան լիութիւնը, իւր իմացականութեան ոյժը, յատկութիւններու ճոխութիւնը եւ ներդաշնակութիւնը, մտածումի եւ կիրքի արտայայտման զօրութիւնը, իւր կենցաղին մաքրութիւնը, գաղափարներուն մեծութիւնը, ազնուական ներշնչումը անոնց, դարձեալ մտածման լայնութիւնը եւ մարդասիրութիւնը, իւր նկարագրին տոկունութիւնը եւ վեհութիւնը, աշխատութեան մէջ իւր աննկուն յարատեւութիւնը եւ արտադրելու յաճախութիւնը, իւր գործնական ուխտը առ բարիին, գեղեցկին ճշմարտին միաւորութիւնը, առ Աստուած, կ'ընեն զինքը Հայ մը օգտակար իւր ազգին եւ մեծ մարդ մը:

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

1876

ՏՆՕՐԷՆԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1909-1910

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ

Պատիւ ունինք 1909-1910 դպրոցական շրջանին յետագայ տեղեկագիրը ներկայացնել Պատ. Ծնողաց եւ յարգոյ հասարակութեան:

* *

Դպրոցական տարին սկսաւ մեծամասնութեամբ վերակազմեալ ուսուցչական խումբով. ներքին պաշտօնէութիւնը, որուն յանձնուած է աշակերտաց բարոյականին խնամքը ի մասնաւորի, լուրջ յաւելում մը ունեցաւ յանձին Արամ էֆ. Նիկողոսեանի որ ընտանեօք հաստատուած է հիմայ վարժարանին մէջ: Նորոգ պաշտօնի կոչուեցան Լեւոն էֆ. Օհանեան եւ Սեդրակ էֆ. Քիւրաճեան, նախակրթարանին մէջ: Այս տարի վարժարանը կը հաշուէ իւր մնալուն պաշտօնէութեան մէջ Մ. Ժիւլիա ֆրանսացին, որ Բարիզի համալսարանական ընթացքը աւարտելով յատկապէս մեր մէջ եկած է աշակերտաց ֆրանսերէն խօսելու վարժութիւնը սրելու համար: Օսմաներէնի ուսուցիչ կարգուեցաւ Ստեփան էֆ. Կուրտիկեան,

Հայերէնի ուսուցիչ՝ Յարութիւն էֆ. Մրմրեան, Իրաւաբանութեան ուսուցիչ՝ Ալի պէյ, Առեւտրական Գիտութեանց ուսուցիչ՝ Գառնիկ էֆ. Շէհրիկեան, Գերմաներէնի ուսուցիչ՝ Հէո Էլմնէո, Անգղիերէնի ուսուցիչ՝ Գառնիկ էֆ. Սիրունեան, երաժշտութեան ուսուցիչ՝ Էտկառ էֆ. Մանաս, Նախապատրաստականի ուսուցիչ՝ Լեւոն էֆ. Օհանեան եւ Սեդրակ էֆ. Քիրաճեան:

Տղայոց առողջութեան քննութիւնը ստանձնեց Տօքթ. Լեւոն էֆ. Պալթազար:

* *

Կենդանի լեզուներուն աւանդումը նոր զարկ մը ստացաւ թէ՛ այդ լեզուները նախապէս աւանդող ուսուցիչներուն փոփոխմամբ, թէ՛ այդ լեզուներուն յատկացուած ժամերուն յաւելմամբ եւ զայնս աւանդելու մեթոտին փոփոխմամբ:

Օսմաներէն լեզուին յատկացուած ժամերուն թիւը որ 12 էր անցեալ տարի, 20 ժամի բարձրացուցինք: Մարտի 1-էն. Կարապետեան, ընտրելագոյն Օսմաներէնի ուսուցիչը, ստանձնած է Օսմանեան լեզուին մեր ծրագրին գործադրութիւնը, ամբողջովին գործնական հիման մը վրայ դնելով իւր ուսուցումը եւ ջանալով միշտ նոր լեզուն իր ամբողջութեանը մէջ սորվեցնել. բարձրագոյն կարգաց Արաբերէնը եւ Պարսկերէնը նաեւ ինք կ'աւանդէ. այս լեզուներուն տիրացմամբը պետական վարժարան մտնել փափաքող աշակերտները առանց դժուարութեան պիտի կարենան ընել իրենց ապագայ ընթացքները:

Բարձրագոյն կարգերու մէջ մի քանի դասեր Օսմաներէն լեզուով տեղի ունեցան. Օսմանեան Կարապետեան, Ալի պէյի կողմէ, Արաբական Իրաւագիտութիւնը, ընդհանուր Իրաւագիտութիւնը նոյն անձին կողմէ, Երեւոյնի Իրաւագիտութիւնը Նշան էֆ. Գալֆաեանի կողմանէ. եւ մասամբ Տիւրքական Գիտութիւնը Պետրոս էֆ. Ստրունիի եւ Թէվֆիք պէյի կողմէ. աշակերտները այսպէս յաճախ առիթ ունեցան լեզուն իւր զանազան ձեւերուն մէջ գործածելով հիմնովին տիրանալու անոր:

Ֆրանսերէնը ուսուցանելու համար սկսած ենք գործածել «Méthode directe»ը. այս մեթոտով աշակերտը կարող է ֆրանսերէնը խօսիլ քիչ ժամանակի մէջ Ֆրանսացիի խօսակցութեան ոգին համաձայն եւ ոչ հայերէնի պէս: Ուսուցիչը աշակերտին հետ միայն ֆրանսերէն կը խօսի եւ կը ջանայ աշակերտին առիթ ընծայել շատ խօսելու ֆրանսերէնը: Իւրաքանչիւր դասարան այս ձեւով աւանդուած ֆրանսերէն դաս ունի առ նուազն ամէն օր. իսկ դասերէն դուրս, աշակերտները ֆրանսերէն կը խօսին ֆրանսացի ուսուցիչին Մ. Ժիւլիային հետ որ իրենց մէջն է. նա մանաւանդ զիշերօթիկները առիթ ունին իրեն հետ ֆրանսերէն խօսելու ճաշերու առնէ, զիշերային համախմբումներու միջոցին:

Բարձրագոյն կարգերու մէջ դասերէն մէկ մասը ֆրանսերէն լեզուով կ'աւանդուի. իսկ դասագիրքերուն մեծ մասը ֆրանսերէն գիրքերէ կը բաղկանայ. աշակերտը լայնօրէն կ'զբաղի այնպիսի լեզուով մը, որուն օգտակարութիւնը եւ պտքը մեր միջավայրին մէջ ակնյայտի եւ անհրաժեշտ են: Այսպիսի ուսուցման վախճանին աշակերտը ձեռք կը ձգէ Բարձրագոյն Գերմաներէն մը:

Անգղիերէնի նոր ուսուցիչը սկսաւ նոյնպէս աւանդել անգղիերէնը «Méthode directe»ով. ուրախութեամբ դիտեցինք որ աշակերտները շուտով յառաջդիմել սկսած են ըլլայ արտասանութեան ճշտութեան, ըլլայ նախադասութիւնները կազմելու դիւրութեան տեսակէտով:

Գերմաներէն լեզուն ալ նոյն ուղղութեամբ ուսուցուիլ սկսաւ:

Առեւտրական բաժինի աշակերտները Անգղիերէն եւ Գերմաներէն թղթակցութեամբ զբաղեցան, մասնաւորապէս շարադրելով առեւտրի մէջ յաճախադէպ նիւթեր:

Կարեւոր եւ նոր ուղղութիւն մը առաւ այս տարեշրջանին դպրոցը Կարապետեանի առաջնորդութեամբ մը հաստատումով: Ֆիզիքական կրթութիւնը ցարդ չէ նկատուած իւր բովանդակ կրեւորութեանը մէջ. բայց մարդուն կեանքին էական պայմաններէն մին, անոր կեանքին sine qua nonը ըլլալը հարկ է լրջօրէն ըմբռնել

եւ ըստ այնմ դպրոցին մէջ նախ աշակերտին առիթը ընծայել ըստ կարելոյն յաճախ կրթելու իւր մարմինը եւ լաւագոյն եղանակաւ կրթելու զայն: Արդարեւ մարմնամարզի դասը, որ կը տրուի մեր դպրոցներուն մէջ, ընդհանրապէս ծրագրին նուազագոյն մասը գրաւելէն զատ, սխալ ուղղութեամբ մը կ'աւանդուի ան ձգտելով աւելի արգիլելու մարմնոյն ամբողջական աճումը քան զայն երազելու: Շուէտական մարզանքի դրութիւնը, զոր ընդունեցանք, աշակերտին մարմինը կը զարգացնէ ամէն կերպով. առաւօտները կէս ժամուան պահի մը մէջ, աշակերտը ուսուցիչին ներկայութեան կը մարզէ բանաւոր շարժումներով կուրծքի, սրունքներու, բազուկներու, վիզի, կոնակի, մէջքի իր դնդեմները, որոնք այսպէս հետզհետէ կազմուելով մարմնոյն կ'ապահովեն ընտիր շնչառութիւն, արեան շրջագայութիւն, մարսողութիւն եւ ջղային դրութիւն մը: Քանի որ դեռատի հասակին մէջն է մանաւանդ որ մարդուն՝ ինչպէս մտաւորական գործողութիւնները, նոյնպէս մարմինը կազմուելու շինուելու յարմարութիւն ունի, ճիգերը պէտք է չխնայել այդ շինութիւնը ընել տալու ընտիր եւ առողջ սկզբունքներու համեմատ, այնպէս որ ապագային մարդը — մեծցած տղան — պատճառ չունենայ ո եւ է կերպով, իւր ունեցած ֆիզիքական յոռի սովորութիւններուն համար մեղադրել իւր մեծերը, զանոնք պատասխանատու նկատելով իւր վիճակին: Ոչ ոք կ'ուրանայ թէ գործնական կեանքին մէջ գործող մարդը ան է որ իր որոշումներուն գործադրութեանը ի սպաս կը գտնէ պատրաստակամ առողջ մարմին մը. կամքին զօրութիւնը հաստատապէս յարաբերութիւն ունի մարմնոյն զօրութեան հետ. եթէ պատրաստել կ'ուզենք մեր տուած մտաւորական եւ բարոյական դաստիարակութեամբ անհատներ, որոնք պիտի բռնեն ամէն բանէ առաջ, ըլլայ իրենց ընտանիքին օգտակար ըլլալու, ըլլայ աւելի ընդարձակ օգտակարութեան մը իրագործմանը համար, պէտք է ուրեմն անհրաժեշտօրէն աշակերտին տալ գործունէութեան կարելոր գործիքը եւ ընտիր գործիք մը, առողջ

մարմինը: Վարժարանին նպատակն է պատրաստել ազգին —

Ահա այս նկատումներով մարմնամարզին ընծայեցինք ընդարձակ բաժին մը ծրագրին մէջ. այս իմաստով նաեւ — դասը մտցուցինք բոլոր դասարաններուն մէջ, դասին նպատակը ընելով տղաքները քիչ-քիչ — Եւ զայն լաւ գործածելու միջոցներուն:

✓ Իսկ ընդհանրապէս ժամանակին գործնական ոգին ի նկատի առնք եւ բոլոր ուսումներուն ծրագիրը այս տեսակէտով վերըստին կազմեցինք. այնպիսի ճիւղեր, որոնք այլեւս պատմական արժէք մը ունին միայն եւ զուրկ են գործնական ո եւ է արդիւնք մը ունենալէ — նա մանաւանդ երբ իրենց պակասը ո եւ է կերպով մտքին եւ սրտին բարուք կազմութեանը արգելք չըլլար — ջնջեցինք ծրագրին մէջէն: Եւ ուրիշ ճիւղեր, ըստ իրենց գործնական արդիւնքին, մտքի շինութեան կարեւորութեան, ընդլայնեցինք կամ նուազեցուցինք իրենք իրենց մէջ: Աշակերտին ժամանակը կորսնցնել չտալ, եւ զայն ներկայ պահանջումներուն մարդը ընել, իրմէ հեռացնելով բոլոր սկոլաստիկ ուսումները, որոնք լաւագոյն կը յարմարին վանական վարդապետներու եւ չեն ծառայեր ոչ մէկ տեսակէտով կազմելու ժամանակակից տրամադրութիւնները աշակերտին մէջ, ահա ինչ որ մեզի առաջնորդ ունեցանք բարեփոխութեան ձեռնարկին մէջ: Ամէն ժամանակ պէտք է ունենայ իւր դպրոցը. ժամանակը դպրոցէն առաջ կը վազէ:

* * *

Վարժարանին Աւագ եւ Երիցագոյն շրջանները այս տարի երեք հատուածներու բաժնեցինք. Աւագները, Գիւնները եւ Գիւնները: Աշակերտները իրենց ընդհանուր զարգացմանը ինպաստ հետեւեցին դասերու անհրաժեշտօրէն հետեւելով հանդերձ, ընտրեցին այս հատուածներէն մին ըստ իրենց ճաշակներուն կամ պէտքերուն:

ՄԵՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՄԱՐԴԸ

Վարժարանը ունի առևտրական ճիւղերու ընթացք մը, որուն շրջանը երեք տարի է: Առևտրական հատուածին աշակերտները մասնաւոր խնամքով կը պատրաստուին ուղղակի հրապարակի կեանքին իրենց յատկացուած ուսումներով եւ ուսուցիչներու ձեռամբ. ստիպողական է իրենց համար ընտրել օտար լեզուներէն կամ Գերմաներէնը կամ Անգղիերէնը. փափաքող աշակերտը կարելիութիւն ունի երկու լեզուները միասին ուսնելու: Ֆրանսերէնը, Անգլերէնը, Գերմաներէնը, Օսմաներէնը եւ Հայերէնը կ'ուսուցուին առևտրական գործառնութեանց մէջ գործածուելու տեսակէտով, բացի իրենց ամբողջական ուսուցումէն: Ահաւասիկ այն մասնաւոր ծրարագիրը որ կիրառործուի այս բաժինին մէջ: Աւելորդ եւ Տարաւորութիւնը կ'աւանդուի հրապարակի գործառնութեանց քաջածանօթ փորձ անձի մը կողմէ որ գործնական ընելու համար դասը՝ դասարանը ըրած է հրապարակ մը ուր աշակերտները յաջորդաբար ամէն տեսակ գործառնութիւն ընելու առիթ ունին: Միեւնոյն ուսուցիչը այս գարնան իւր աշակերտները խումբ խումբ պտտցուց Պոլսոյ այլ եւ այլ հայ եւ օտարազգի մեծ վաճառականական տունները:

Աւելորդ իրաւաբանութեան դասը (որ կ'աւանդուի Պոլսոյ իրաւաբանական վարժարանէն շրջանաւարտ փաստաբանի մը կողմէ), նպատակ ունի տալու, աշակերտներուն առևտրական յարաբերութեանց օրէնսգիտական պայմաններուն ծանօթութիւնը: Այս դասը տեղի կ'ունենայ Օսմաներէն լեզուով:

Աւելորդ Լուսաւորութեան դասը աշակերտներուն՝ պանքաներու եւ օտարազգի դրամական հաստատութեանց մէջ յաջողապէս մտնելու համար պէտք եղած պաշարը կուտայ ինչպէս հաշուադիտութեան կուռ ծանօթութիւններ:

Որովհետեւ այս ճիւղին նպատակը ոչ միայն առևտուրի պարզ մարդը պատրաստել է, այլ աշակերտին մէջ ապագայ ըն-

դարձակ գործի ձեռնարկելու կարողութիւնը ստեղծել, ջանացած ենք տարածուած տեղեկութիւններ տալ վաճառականութեան մասին. հաստատած ենք վաճառականութեան պարտականութիւնը եւ աշխատանքները դասընթացքը, որով աշակերտը կը տեղեկանայ այլ եւ այլ ժամանակներու մէջ ազգերուն ըրած առևտուրներուն ձեւին եւ տեսակին ինչպէս նաեւ զաղափար կը կազմէ այլ եւ այլ երկիրներու մէջ գտնուած ապրանքներուն վրայ: Իսկ Աւելորդութեան դասընթացքը մասնաւորապէս ցոյց կուտայ տղայոց ապրանքները ճանչնալու արուեստը, գէշը աղէկէն զանազանելու միջոցները:

Տնտեսականութեան դասը հարստութեան կազմութեան, բաշխման ընդհանուր օրէնքներուն վրայ խօսելով նպաստաւոր օժանդակութիւն մը կը բերէ աշակերտին՝ իբր ապագայ լուրջ եւ խոհեմ վաճառականի մը կազմութեան:

Վերջապէս Գրաւորութեան եւ Զննչային օրէնագիտութեան, օրաբանութեան վաճառականութեան օրէնագիտութեան, խառնուրդութեան եւ այլ դասընթացքները կ'ամբողջացնեն այս հատուածին ծրագիրը:

Երբէք աշակերտին միտքը չծանրաբեռնել անօգուտ ծանօթութիւններով, այլ անընդհատ անոր ասիւն ինչպէս աշխատելու, սովորեցնել գործնական դիւրութեան միջոցներով, ըստ կարելոյն քիչ ատենի մէջ զինքը հաշուագէտի տնտեսագէտի, գրքէ խառնուրդի պիտանի ծանօթութիւններու տէր ընելու համար, եւ միանգամայն տալ իրեն բարոյական եւ ֆիզիքական ընտիր կրթութիւն մը, ահա նպատակը որուն կը ձգտի վարժարանին առևտրական հատուածը:

ՄԵՐ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ

ԲԺՇԿԱԿԱՆ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԱՍՊԱՐԷՋՆԵՐՈՒՆ

Այն աշակերտները, որոնք կը փափաքին ապագային ընդգրկել բժշկական կամ ճարտարարուեստական ասպարէզ մը որպէս Ingénieur Mécanicien, Ingénieur Electricien, Ingénieur Ar-

chitecte, Ingénieur Agronome, Ingénieur Chimisteի եւնի. ասպարէզները, կրնան մտնել գիտական բաժինին մէջ, ուր կը պատրաստուին հետեւելու այդ ասպարէզներուն յատուկ՝ դպրոցներուն համալսարանական դասերուն: Այս բաժինին մէջ կ'աւանդուին Ա. Բարձրագոյն Գիտական Դպրեւանքները. Բ. Մեծ Բնագիտական Գի. Մանագիտական Բնագիտական Դ. Մանագիտական Բնագիտական Ե. Բնագիտական, ելն: Ուսողովութիւնը, որ քն կարեւոր ճիւղն է ապագայ վերոյիշեալ ասպարէզներուն մէջ, կարեւոր տեղ մը կը գրաւէ գիտական բաժինին ծրագրին մէջ:

Քիմիագիտութեան աշխատանոց մը բացինք այս բաժինին համար. 10 աշակերտներ սկսան աշխատիլ իրենց ուսուցիչին հսկողութեան ներքեւ, մէթոդիկ կերպով մարմիններու յատկութիւնները գտնելու, խառնուրդներ զատելու իրարմէ: Յաջորդ տարի ալ աւելի պիտի ընդարձակենք աշխատանոցը: Բուսաբանութեան դասն ալ ունեցաւ իւր գործնական բաժինը աշխատանոցին մէջ մանրադէտով: Այս բաժինին աշակերտներուն թիւը բաւական մեծ ըլլալով ականայայտնի կ'երեւայ թէ իւր գոյութիւնը պէտք մ'ընէ էր:

ՄԵՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ ՄԱՍՆԱՌՈՐԱՊԷՍ
ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶԻՆ

Իսկ այս բաժինին կրնան հետեւիլ բոլոր անոնք, որոնց մէջ ուսուցչական գոծունէութեան մը միտում կայ: Հոս կ'աւանդուին մասնաւոր հոգաժութեամբ Հայերէն, Գրեւորութեան, Հայերէն-Եւրոպական, Ֆրանսական Մաթեմատիկական, Մանկավարժական, Արհեստներէն, Պարտիզներէն, Օր. Մաթեմատիկական, եւն: Մանկավարժութեան դասը գործնական ընելու համար, սոյն բաժինին աշակերտները յաջորդ տարին ներկայ պիտի գտնուին, փորձ ուսուցիչներու կողմէ նախապատրաստական կարգերուն մէջ աւանդուած դասերուն: Պիտոյ՝ ինչպէս զաւաններու մէջ վարժապետանոցի մը պակասը զգալի ըլլալով, ջանացինք ըստ կարելոյն այդ թերին

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆԻՆ

ԱՄԱՌՆԱՅԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԵՒՐՈՊԱՅ(*)

Պէրպէրեան վարժարանի Տնօրէնը, վարժարանին մէջ կարգ մը կարեւոր բարեկարգութիւններ ներմուծելու համար, այս ամառնա-յին արձակուրդին Յուլիս ամիսը պիտի անցնէ Եւրոպայի գլխաւոր երկիրները, ի մասնաւորի Ֆրանսա, Զուիցերիա եւ Պելճիգայ, ուր դպրոցները պիտի պտտի եւ պիտի տեսակցի կրթական ակնյայտնի անձնաւորութեանց հետ խորհրդակցելով դպրոցական կենսական խնդիրներու վրայ: Փոքր տղայոց կրթութիւնը մեծ խնամքով ի գործ դրուելու համար մանաւանդ փոփոխութիւններ պիտի մտցուին:

Եւրոպական կրթական հաստատութեանց կարգ ու սարգը մօտէն տեսնել, անոնց մէջ տիրող ոգիին հետ մօտէն շփման մէջ գտնուիլը անհրաժեշտ է Տնօրէնութեան համար, որ ջանադիր է իրեն յանձնուած տղայոց ընտիր կրթութիւն մը տալ: Տնօրէնը յուսալից է որ իր տեսակցութեանց արդիւնքը շատ նպաստաւոր պիտի ըլլայ վարժարանին եւ պիտի կարողանայ զայն դնել յաջորդ տարեշրջանին նորագոյն պէտքերուն համաձայն վիճակի մը մէջ:

(*) Այս ուղեւորութիւնը դպրոցական շրջանին մէջ իսկ, Դեկտեմբեր ամսոյն տեղի պիտի ունենար սակայն մեծ արծակաւորդին յետաձգուեցաւ :

ԲԱՐՁՐԱՊԱՏԻՒ ՊՕՂՈՍ ԲԱՇԱ ՆՈՒՊԱՐ

Ե Ի

Պ Է Պ Է Բ Ե Ա Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն

Ուրախութիւնը ունինք յայտարարելու որ Բարձրապատիւ Պօղոս բաշա Նուպար զնահատելով Պէրպէրեան Վարժարանի վաղեմի գոյութիւնը եւ կարեւոր ծառայութիւնները զորս մատուցած է Ազգին ընծայելով անոր շատ մը օգտակար եւ պարկեշտ քաղաքացիներ, եւ նկատելով զաւառացի աղքատ պատանիներուն նիւթական անձուկ վիճակը, մտադրած է Իւր թանկագին օժանդակութիւնը ընձեռել այս վերջիններուն դնելով զանոնք Պէրպէրեան Վարժարանը յաճախելու նիւթական պայմաններուն մէջ: Այսպէս Նորին Բարձրութիւնը, եւրոպական Համալսարաններուն մոտքը դիրացնելու համար Իւր յատկացուցած բազմաթիւ թոշակներէն մի քանին որոշած է վերապահել Պէրպէրեան Վարժարանի մէջ աղքատ տղաքներու աշակերտութեան:

Այս հիմնարկութիւնը անհուն երախտիքի կը հրաւիրէ հանդէպ մեծանուն Բարերարին այն զաւառացի պատանիները որոնց աշխատութեան կորովը եւ փափաքը խոռոր կը համեմատին իրենց նիւթական դիւրութիւններուն հետ. չեն պակսիր զաւառներուն մէջ մտքի սրտի եւ կամքի փայլուն յատկութիւններով օժտուածներ որք կոչուած են ապագայ կարեւոր անհատականութիւններ ըլլալու Ազգին մէջ, բայց որք անօգուտ կը մնան եւ անշահաբեր Ազգին՝ իրենց չքաւորութեանը պատճառաւ. այսպիսիները գտնել եւ ուսանելու վիճակին մէջ դնել, լուսաւորութեան գործ մըն է եւ Ազգային վերածննդեան ահագին նպաստ մը:

Ահա այսպիսի է այն բարեգործութիւնը որուն Բարձ. Պօղոս բաշա Նուպար, ազնուական շարժումով մը կուգայ իրականութիւն տալ: Պէրպէրեան Վարժարանը առաջինն է յայտնելու իւր խորին հիացումը եւ շնորհակալիքը Նորին Բարձրութեան բոլոր զաւառացի աղքատ պատանիներուն զգացմանցը թարգման հանդիսանալով. եւ Ազգը հանդէպ Նորին Բարձրութեան ունեցած արդէն մեծ երախտիքին Նորէն յաւելնալը ուրախութեամբ կ'զգայ այս առիթով:



ՀՐԶԱՆԱԻԱՐՏՔ

ՊԵՐԱԼԵՐԻ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1876-1909

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱԽԱՐՏՆԵՐՈՒ

Ը Ն Կ Ե Ր Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

1908 թոսոս 15ին Պերպերեան սաներու խումբ մը հրաւեր ուղղեց բոլոր վարժարանին շրջանաւարտներուն միանալ՝ Պերպերեան Սաներու Ընկերակցութիւն մը կազմելու համար. Ընկերակցութիւնը գոյութիւն չէր ունեցած մինչեւ այն ատեն նախկին բեթմին հետեւանով. ուրիշ դպրոցներ Եւրոպայի մէջ, եւ Թուրքիոյ մէջ օտարահայասակ դպրոցներ գրեթէ իրենց հիմնարկութեան տարիներէն ունին այսպիսի Մարմիններ որոնց նպատակը կրկնակի է. նախ կապ մը կը հաստատեն նախկին ընկերակիցներու մէջ եւ իրենց տարեկան հաւաքումներովը առիթը կ'ընծայեն նախկին դպրոցակիցներու գիտար տեսնելու եւ միշտ իրարմով հետաքրքրուելու, երկրորդ՝ ուղղակի դպրոցին օգտակար ըլլալ կը շանան անոր պէտքերը նկատելով: Շրջանաւարտներու ընկերակցութիւն մը պէտք մըն էր նաեւ Պերպերեան սաներու եւ Պերպերեան Վարժարանին համար: Ասոնք եղան անա Ընկերակցութիւն մը կազմելու առաջնորդող զաղափարները. յետոյ Հիմնադիրին անգուղական հոգին միացնող գերագոյն յատկութիւնը ունի. մեծ Ուսուցչապետին պատշաճ անունին շուրջը հաւաքուիլը իւր սաներուն համար նուիրական պարտաւորութիւն մ'է: Պերպերեան Վարժարանի միակ ըղձանքն է հաստատուն հիմքերու վրայ իրագործուած տեսնել մօտ ատենէն այս Միութիւնը:

ՇՐՋԱՆԱԽԱՐՏԷ ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ (*)

1876-1909

1878

Յովհաննէս Արամեան
Համբարձում Պերպերեան
Լեւոն Տէմիրճիպաշեան

Յիշիպէ
Գահիրէ
Կ. Պոլիս

Վաճառակ. Յանձնակատար
Առևտրական
Պետ տոմարակալութ. Հան.
պարտուց վարչութեան

1882

Մարթէոս Եկէնեան

Կ. Պոլիս

Յովհաննէս Հինդլեան

Կ. Պոլիս

Նշան Գալֆայեան

Կ. Պոլիս

Ընդհ. Հսկող Կայսերական
Միլիթիէ վարժարանին
Տնօր. Վերոյ Դպրոցի. Ման-
կավարժ
Ուսուցիչ Հալալլի Երկր-
վարժարանին, և Երկրա-
գործական նախարարութ.
Գիտ. Ֆիզիկն օգ. Տնօրէն

Յովհաննէս Եկէնեան
Կարապետ Տէմիրեան
Գէորգ Կիւրեղեան
Երուանդ Սեդրոսեան
Նիկողոս Բաշալեան

†
Պրուսա
Կ. Պոլիս
Ռուսմանիա
†

Ուսուցիչ
Փաստաբան
Վաճառական

1883

Թազուր Գարակէօզեան
Լեւոն Բաշալեան

Փարիզ
Պագու

Գրիգոր Նէվրուզ
Լեւոն Շահպազեան
Պետրոս Մախոխեան
Յակոբ Արապեան

†
†
Գահիրէ
Կ. Պոլիս

Սկսանաւոր
Տնօրէն Ֆրանսական նաւա-
յին շահագործման Ընկ. եան

Բժիշկ
Արձանագործ

(*) Վարժարանին, պատուական շրջանաւարտներէն կը խնդրենք որ բարեհաճին իրենց հասցէները մանրամասնութեամբ Տնօրէնութեան հաղորդել:

1885

Գրիգոր ձեվահիրճեան
Միհրան Մոզեան
Միհրան Դալֆայեան
Վահրամ Թազուրեան

Կ. Պոլիս
Կ. Պոլիս
†
†

Առեւտրական
Ուսուցիչ

1886

Արտաշէս Ֆէսլեան
Պօղոս Էսմէրեան
Եռերիաս Էսմէրեան

Առա-Բազար
Փարիզ
Կ. Պոլիս

Վաճառական
Առեւտրական

1887

Արտաշէս Կարապետեան
(Իւզարբերեան)
Արիստակէս Ֆէսճեան
Կարապետ Խորասանճեան
Փառնակ Բիւսկիւլեան
Միհրան Սէմէրճեան
Արամ Նիկողոսեան

Ռուսահա
Սերպիս
Կ. Պոլիս
†
Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Առեւտրական
Դեր-Հիւպատոս Վրանիոյ
Վաճառական
Վաճառական
Բ. Տնօրէն Պէրպէրեան Վար-
ժարանի. Մանկավարժ

1888

Երուանդ Դարայեան
Միհրան Սարրաֆեան

Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Վաճառական
Մաքս. վերատեսչութ. Հա-
կակշռի ղիւանի Տնօրէն
Վաճառական
Առեւտրական
Վաճառական
Բժիշկ
Առեւտրական
Բերայի դատարանաց գոր-
ծադիր իշխանութ. պետ
Դիւանապետ Արտ. Գործոց
Կոմսարարութեան

Յովհաննէս Տէմիրեան
Սէթ Ասլանեան
Ստեփան Ասլանեան
Պօղոս Դոլրլեան
Երուանդ Սեղբոսեան
Երուանդ Լաթիֆեան

Ռոսոսթո
Փարիզ
Աֆիոն-Դադանիսար
Փարիզ
Պօստըն
Կ. Պոլիս

Լեւոն Սուրէնեան

Կ. Պոլիս

Վաճառական
Առեւտրական

Արշակ Էսաեան
Արմենակ Պէլլեբեան

Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Կարապետ Ֆրէնկեան
Խաչիկ Խաչատուրեան

Բեօսթէն
Կ. Պոլիս

Վաճառական
Առեւտրական

1896

Յարութիւն Պասմաճեան
Արթոյ Մէզպուրեան
Արշալիր Աշճեան
Խաչիկ Պասմաճեան
Երուանդ Զայեան
Լեւոն Յակոբեան
Լեւոն Սէմէրճեան
Կարապետ Մանիսալեան

Կ. Պոլիս
Կեմիշիկ
Կ. Պոլիս
†
Կ. Պոլիս
Զուիցեթիա
Կ. Պոլիս
Պրայլա

Վաճառական
Բժիշկ
Վաճառական
Բժիշկ
Առեւտրական
Վաճառական

1897

Լեւոն Գալուստեան

Կ. Պոլիս

Առեւտրական

1898

Առաքել Առաքելեան
Լեւոն Մառնիօզեան (Պաթա-
Պէտն Պէզազեան [զար)
Սմբատ Երամեան
Տիգրան Զէրչեան
Զարեհ Պազալեան
Աբիկ Արիսողոմեան
Արշակ Տ. Մովսէսեան

Ադեֆանսիա
Կ. Պոլիս
Ասամա
Կ. Պոլիս
†
†
Կ. Պոլիս
Կ. Պոլիս

Ուսուցիչ
Բժիշկ
Առեւտրական
Առեւտրական
Ճարտարապետ

1899

Բարսեղ Բէշիշեան
Յակոբ Գալֆայեան
Տիգրան Գալբաթճեան
Սեպուհ Տանծիկեան
Յակոբ Նորհատեան

†
Կ. Պոլիս
†
†
Կ. Պոլիս

Առեւտրական

Կոպեռնիկ Պէզազեան

Կ. Պոլիս

Պետ Ելեմտից ղիւանի Ազգ.
Պատրիարքարանի
Շերամարութ. բնիչ Հանր.
Պարտուց Վարչութեան
Պաշտօնեայ Անատոլի Եր-
կանուղոյ վարչութեան

Հրանտ Գայրթճեան

Կ. Պոլիս

Գէղէօն Զէօմէկճեան
Եղուարդ Գօլանճեան

Կ. Պօլիս
Կ. Պօլիս

Վաճառական
Առեւտրական

1900

Տիրան Զարէեան
Արամ Ֆէրուհան
Պետրոս Ատրոնի

Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս

Առեւտրական
»
Պետական պաշտօնեայ Հանր-
կրթ. նախարարութեան
Առեւտրական
Վաճառական
»

Յակոբ Սարգսեան
Միհրդատ Նիկողոսեան
Լեւոն Ճէզվէճեան
Յովսէփ Պէզազեան
Գասպար Մախոխեան
Վահան Դալուստեան

Կ. Պօլիս
Ասիս-Ապսպա
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
†
Կ. Պօլիս

Ուսանող իրաւագիտութեան
Առեւտրական

1901

Երուանդ Հազարապետեան
Պերճ Նազիկեան

Կ. Պօլիս
Կ. Պօլիս

Առեւտրական
Պաշտօնեայ Անատօլի եր-
կամուղոյ վարչութեան

Մատթէոս Փափազեան
Միհրան Սուճեան
Առնակ ձիւլանեան
Պօղոս Կարմիրեան
Արշակ Մարրլեան
Խոսրով Խարբոյ թլեան
Մերկեր Ալիքսանեան

Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Խարբերդ
Սեբասիա

Առեւտրական
Առեւտրական
Բժիշկ
Վաճառական
»
Առեւտրական
Վաճառական
Առեւտրական

1902

Պարոյր Քէչեան
Եղուարդ Օտապաշեան
Յովհաննէս Սէթեան
Կարապետ Հանէսեան
Սարգիս Թուլութեան
Հրանտ Գազազեան
Արամ Սէմէրճեան

Կ. Պօլիս
Նաւսի
Փարիզ
Մանչեսթըր
Գարա-հիսար
Կ. Պօլիս
Կ. Պօլիս

Խմբագիր «Բիւզանդիոն»-ի
Քիմիագէտ
Բժշկական ուսանող
Վաճառակ. Յանձնակատար
Վաճառական
Առեւտրական
Վաճառական

1903

Գեղամ Գրիգորեան
Յովհաննէս Պէրպէրեան

Օրսու
Կ. Պօլիս

Վաճառական
Տնօրէն Պէրպէրեան Վարժա-
րանի

Հայկ Հազարոսեան
Արմենակ Պօղոսեան
Հազարոս Բաբէլեան
Տիգրան Զէօկլուրեան
Դաւիթ Մսրրեան
Դանիէլ Յովհաննէսեան
Մանուկ Աճէմեան
Գամէր Շիրինեան

Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Նիւ-Եօրթ
Կ. Պօլիս
Պրիւֆաէլ
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս

Վաճառակ. Յանձնակատար
Ուսանող իրաւագիտութեան
Ելեկտրագէտ
Ուսուցիչ
Վաճառական
Առեւտրական
»

Զարեհ Մեծատուրեան
Կարապետ Բէհիլվանեան
Գրիգոր Արխանեան

Կ. Պօլիս
Կէշվէ
†

Գործակատար Ազգ. Պատ-
րիարքարանի
Առեւտրական
»

1904

Գրիգոր Ոսկանեան
Բարսեղ Տինանեան
Գրիգոր Սվաճեան
Վահրամ Ղուկասեան

Կ. Պօլիս
Փարիզ
Կ. Պօլիս
Կ. Պօլիս

Առեւտրական
Բժշկական ուսանող
Առեւտրական
Պաշտօնեայ Անատօլի եր-
կամուղոյ վարչութեան
Պաշտօնեայ Անատօլի եր-
կամուղոյ վարչութեան

Լեւոն Պապօնեան

Կ. Պօլիս

Զարեհ Զաքարեան
Մկրտիչ Էրբիլէթեան
Վահրամ Եճմէնիճեան
Երուանդ Մեսրոպեան
Գրիգոր Ալէաթճեան
Հրանտ Գաբրիէլեան
Եղուարդ Փափազեան
Պետրոս Պալըճեան
Հրանտ Պաղտիկեան
Գրիգոր Յովակիմեան
Երուանդ Կիւլպէնկեան
Թուսիկ Սէտէֆճեան

Կ. Պօլիս
Սաւսոն
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Սաւսոն
Ադիսապոլիս

Վաճառական
Առեւտրական
»
»
»
»
»
»
»
Ուսուցիչ
Առեւտրական
»

1905

Ռուբէն Զիլինկիրեան
Թորոս Սօֆեան
Աշոտ Իւթիւճեան
Մինաս Միքայէլեան
Եզնիկ Քաջունի
Շնորհք Տէյրովէնճեան
Արամ Զարֆճեան
Լեւոն Եսփրուեան
Պետրոս Մալխաթեան
Յարութիւն Հմայեան
Դեղամ Գալաֆեան

Լօզան
Կէյլէ
Կ. Պօլիս
Ֆիլիպի
Կ. Պօլիս
Կէյլէ
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Էսկի-Շէհիւր
Փարիզ

Մատաթիա Տ. Մարկոսեան
Մանուկ Պասմաճեան
Հրանտ Փանոսեան
Յակոբ Յակոբեան
Յակոբ Զպուրճեան

Չեմկիլէր
Կ. Պօլիս
Զօնկուշաֆ
Կ. Պօլիս
Կ. Պօլիս

1906

Տէվլէթ Դէորգեան

Փարիզ

Արշակ Պապիկեան
Ներսէս Մալխասեան
Շահան Պէրպէրեան

Կ. Պօլիս
†
Փարիզ

Դաւիթ Բառնարասեան

Կ. Պօլիս

Թազուր Տէօրովէճեան
Մկրտիչ Տէօվլէթեան

Կ. Պօլիս
Լօզան

Գարեգին Ամատեան
Վահան Իսպիրեան
Տիրան Թաշճեան
Օննիկ Գօնապրլըգեան
Թորգոմ Մուրաֆեան
Երուանդ Անդրանիկեան

Վեմէսիկ
Փարիզ
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Գարաշ
†

Բժշկական ուսանող
Շերամարոյծ. առեւտրական
Առեւտրական

Ուսանող Իրաւագիտութեան
Վաճառական
Առեւտրական
Վաճառական
Առեւտրական
Ուսուցիչ
Վկայեալ Բօն Գ'է Շօսէ Վար-
ժարանէն

Յանձնակատար-Վաճառակ.
Առեւտրական
Վաճառական
Առեւտրական
»

Ուսանող Մաժեմաթիկական
գիտութեանց
Առեւտրական

Ուսանող Իմաստասիրական
ուսմանց

Պաշտօնեայ Անատօլուի Եր-
կաթուղւոյ վարչութեան
Առեւտրական
Ուսանող ձարտար. գիտու-
թեանց

Ուսանող
Վաճառական
Առեւտրական
Բժշկական ուսանող
Շերամարոյծ

1907

Երանոս Հապէշեան
Վահրամ Զուխաճեան
Պերճ Սաաթճեան

Կ. Պօլիս
Փարիզ
Կ. Պօլիս

Դէորդ Փիլիպպոսեան
Լեւոն Ռուբէնեան
Վահրամ Դերձակեան
Երուանդ Անդրէասեան
Օննիկ Կէնճեան
Գաբրիէլ Պասմաճեան
Դրիգոր Շահինեան
Զենոր Սուրէնեան
Վահրամ Աւգեր

Ռոսօսթո
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Օրսու
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս

Առեւտրական
Ուսանող Իրաւագիտութեան
Ուսանող կայսերական Միլ-
բիլէ վարժարանին

Ուսուցիչ

»

Առեւտրական

»

»

»

Օգնական Դոմիսէր

Ուսանող Իրաւագիտութեան
Առեւտրական

1908

Յարութիւն Քիւրտեան
Հերմոն Թաշճեան
Կարապետ Գալաֆեան

Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս

Յակոբ Քէշիշեան
Միհրան Էքսէրճեան
Կարապետ Էքսէրճեան
Արմենակ Գարանֆիլեան
Արշակ Գալմաթեարեան
Մկրտիչ Կարապետեան
Արմենակ Քէրէսթէճեան
Տիգրան Սիւրմէեան

Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Ռոսօսթո
Գաբրիէլ
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս

Ուսանող Իրաւագիտութեան
Առեւտրական
Ուսանող կայսերական Միլ-
բիլէ վարժարանին

Առեւտրական

Բժշկական ուսանող

»

»

Առեւտրական

»

»

»

Ուսուցիչ

1909

Վարդան Սարգսեան
Տիրան Անդրէասեան
Սուրէն Գլըճեան
Թազուր Դերձակեան
Վահրամ Թէմպէրիճեան
Արամ Աղամեան
Արտեմիոս Դէորդօֆ
Կոպեռնիկ Թանտրճեան

Կ. Պօլիս
Օրսու
Թիւրքայօղու
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Կ. Պօլիս
Զախսալու
Կ. Պօլիս
Կ. Պօլիս

Զայրմայր Մարտիրոսեան

Կ. Պօլիս

Առեւտրական

»

»

»

Ուսանող Իրաւագիտութեան

»

»

Առեւտրական

Ուսանող Երկրագործ. վար-
ժարանի Հալգալը

Ուսանող Երկրագործ. վար-
ժարանի Հալգալը

1907

1908

1909

20849

8102

«Ազգային գրադարան»



NL0053589

